ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
27 դեկտեմբերի 1997 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

Հոդված 16. Պետական գրանցման համար պետական տուրքի դրույքաչափերը

Պետական գրանցման համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝

1.	***(կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-41-Ն)***	
1.1	***(կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-41-Ն)***	
1.2	***(կետն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-131-Ն)***	
1.3	***(կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-41-Ն)***	
1.4	***(կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-41-Ն)***	
1.5	***(կետն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-131-Ն)***	
1.6	պետական գրանցում իրականացնող այլ մարմնի կողմից գրանցված (հաշվառված) կազմակերպություններին, առանձնացված ստորաբաժանումներին ու հիմնարկներին անձի դիմումի համաձայն պետական ռեգիստրի կողմից գրանցման (հաշվառման) համար (առանց փոփոխությունների գրանցման կամ	բազային տուրքի 10-ապատիկի չափով

	հաշվառման)	
1.7	***(կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-41-Ն)***	
1.8	***(կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-41-Ն)***	
1.9	***(կետն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-131-Ն)***	
1.10	պետական ռեգիստրում գրանցման ենթակա օտարերկրյա իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացման նախնական գրանցման համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
1.11	պետական ռեգիստրում գրանցման ենթակա իրավաբանական անձանց՝ Հայաստանի Հանրապետությունից այլ պետություն ռեդոմիցիլացման համար	բազային տուրքի քսանապատիկի չափով
1.12.	պետական միասնական գրանցամատյանում գրանցման (հաշվառման) ենթակա՝	
	1) ոչ առևտրային կազմակերպությունների (բացառությամբ կուսակցությունների) պետական գրանցման համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
	2) կուսակցությունների պետական գրանցման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով
	3) Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների հաշվառման համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
	4) օտարերկրյա իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների հաշվառման համար	բազային տուրքի 50-ապատիկի չափով

	5) իրավաբանական անձանց և դրանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, պետական միասնական գրանցամատյանում գրառման ենթակա տեղեկությունների փոփոխությունների (բացառությամբ իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման, լուծարման գործընթացում գտնվելու վերաբերյալ տեղեկությունների գրառման, պետական ռեգիստրում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների փոփոխությամբ պայմանավորված գրանցման համար, ինչպես նաև այն տեղեկությունների փոփոխությունների գրանցման համար, որոնք արդիականանում են պետական միասնական գրանցամատյանում ինքնաշխատ կերպով) գրանցման համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
	6) իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների գործադիր մարմնի ղեկավարի կամ մասնակցի տվյալների (բացառությամբ այն տեղեկությունների, որոնք արդիականանում են ինքնաշխատ կերպով) փոփոխության պետական գրանցման համար	բազային տուրքի 5-ապատիկի չափով
	6.1) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնումը գրանցելու համար	բազային տուրքի 5-ապատիկի չափով
	7) դիմումի համաձայն՝ պետական ռեգիստրում	բազային տուրքի

	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների փոփոխությամբ պայմանավորված՝ գրանցման (գրանցումների) համար	20-ապատիկի չափով
	8) իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցման համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
	9) իրավաբանական անձանց վերակազմակերպմամբ պայմանավորված յուրաքանչյուր պետական գրանցման համար (նոր ստեղծվող իրավաբանական անձի պետական գրանցում, փոփոխության պետական գրանցում, գործունեության դադարման վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցում)	բազային տուրքի 50-ապատիկի չափով
	10) հիմնարկների և առանձնացված ստորաբաժանումների վերակազմակերպմամբ պայմանավորված յուրաքանչյուր պետական հաշվառման համար (նոր ստեղծվող պետական հաշվառում, փոփոխության պետական հաշվառում, գործունեության դադարման վերաբերյալ տեղեկությունների պետական հաշվառում)	բազային տուրքի 50-ապատիկի չափով
2.	անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման նպատակով թղթային եղանակով դիմումի ընդունման համար	բազային տուրքի եռապատիկի չափով
2.1	անհատ ձեռնարկատերերի տվյալների փոփոխության պետական հաշվառման համար, բացառությամբ այն տեղեկությունների, որոնք ինքնաշխատ կերպով արդիականանում են պետական ռեգիստրի տվյալների բազայում՝ առանց անձի հավելյալ դիմումի կամ	բազային տուրքի 150 տոկոսի չափով

	պահանջի	
2.2	***(կետն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-131-Ն)***	
3.	***(կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-41-Ն)***	
3.1	***(կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-41-Ն)***	
3.2	***(կետն ուժը կորցրել է 19.01.21 ՀՕ-41-Ն)***	
4.	***(կետն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-131-Ն)***	
4.1	***(կետն ուժը կորցրել է 19.03.12 ՀՕ-131-Ն)***	
4^{7}.	***(կետն ուժը կորցրել է 01.06.06 ՀՕ-109-Ն)***	
5.	բանկերը, կորպորատիվ ներդրումային ֆոնդերը, պայմանագրային ներդրումային ֆոնդերի կանոնները, ներդրումային ֆոնդի կառավարիչները, արժեթղթավորման հիմնադրամները, ապահովագրական ընկերությունները, կենսաթոշակային հիմնադրամները, գրանցելու համար	բազային տուրքի 40-պատիկի չափով
5^{1}.	ներդրումային ֆոնդերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների ընթացիկ պետական գրանցումների համար	բազային տուրքի քսանապատիկի չափով
5^{2}.	ներդրումային ընկերություններին որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ վերագրանցելու համար	բազային տուրքի քսանապատիկի չափով
6.	օտարերկրյա բանկերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների մասնաճյուղերը գրանցելու համար	բազային տուրքի 40-պատիկի չափով
7.	Հայաստանի Հանրապետությունում գրանցված բանկերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների,	բազային տուրքի 20-պատիկի չափով

	ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների մասնաճյուղերը գրանցելու համար	
8.	օտարերկրյա բանկերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների, ապահովագրական ընկերությունների, կենսաթոշակային հիմնադրամների ներկայացուցչությունները գրանցելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
8[1].	Հայաստանի Հանրապետությունում գրանցված բանկերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների ներկայացուցչությունները գրանցելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
9.	***(կետն ուժը կորցրել է 08.12.05 ՀՕ-249-Ն)***	
10.	***(կետն ուժը կորցրել է 08.04.08 ՀՕ-27-Ն)***	
11.	***(կետն ուժը կորցրել է 13.12.03 ՀՕ-16-Ն)***	
12.	***(կետն ուժը կորցրել է 13.12.03 ՀՕ-16-Ն)***	
13.	***(կետն ուժը կորցրել է 12.06.02 ՀՕ-375-Ն)***	
14.	***(կետն ուժը կորցրել է 12.06.02 ՀՕ-375-Ն)***	
15.	***(կետն ուժը կորցրել է 11.10.00 ՀՕ-99)***	
16.	արժեթղթերի ազդագրի գրանցման համար՝	
ա)	եթե արժեթղթերի ազդագրերը գրանցվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից	բազային տուրքի 50-ապատիկի չափով
բ)	եթե արժեթղթերի ազդագրերը գրանցվում են ֆոնդային բորսայի կողմից	բազային տուրքի 25-ապատիկի չափով
17.	ավտոմոբիլի հաշվառման համարանիշ (բացառությամբ տարանցիկ և ժամանակավոր համարանիշի) հատկացնելու համար	բազային տուրքի տասներկուապատիկի

		չափով
17. 1.	մոտոտրանսպորտային միջոցի, տրիցիկլի, քվադրիցիկլի, կցորդի (կիսակցորդի) հաշվառման համարանիշ հատկացնելու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
18.	***(կետն ուժը կորցրել է 15.11.10 ՀՕ-173-Ն)***	
19.	***(կետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)***	
20 .	ջրային փոխադրամիջոցները գրանցելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
21.	գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման և պետական համարանիշներ տալու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
22.	գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների կորցրած պետական համարանիշը վերականգնելու համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
23.	տրակտորային կցանքների պետական համարանիշեր տալու համար	բազային տուրքի եռապատիկի չափով
24.	տրակտորային կցանքների պետական համարանիշեր վերականգնելու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
25.	դիվանագիտական ներկայացուցչություններին, հյուպատոսական հիմնարկներին և միջազգային կազմակերպություններին տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշներ հատկացնելու համար	բազային տուրքի քսանհինգապատիկի չափով
26.	ավտոմոբիլի, մոտոտրանսպորտային միջոցի, տրիցիկլի, քվադրիցիկլի, կցորդի (կիսակցորդի) հաշվառման վկայագիր տալու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով

27.	***(կետն ուժը կորցրել է 15.11.10 ՀՕ-173-Ն)***	
28.	տրանսպորտային միջոցների տարեկան տեխնիկական զննությունը ճանապարհային ոստիկանության մարմինների կողմից անցկացնելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տալու համար	բազային տուրքի վեցապատիկի չափով
28.1	***(կետն ուժը կորցրել է 20.01.21 ՀՕ-60-Ն)***	
29.	գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տարեկան տեխնիկական զննությունն անցնելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տալու համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
30.	***(կետն ուժը կորցրել է 29.11.06 ՀՕ-229-Ն)***	
31.	***(կետն ուժը կորցրել է 13.12.00 ՀՕ-123)***	
32.	ջրային փոխադրամիջոցները վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաև դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված որևէ գործողություն կատարելու համար	բազային տուրքի չափով
33.	գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաները գրանցելու, վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաև դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված որևէ գործողություն կատարելու համար	բազային տուրքի 50 տոկոսի չափով
33.1	Ինքնագնաց ճանապարհաշինարարական մեքենաների և մեխանիզմների գրանցման համար	բազային տուրքի 150 տոկոսի չափով
34.	***(ենթակետն ուժը կորցրել է 02.05.01 ՀՕ-181)***	
35.	դեղերի պետական գրանցման համար՝	

ա)	դեղերի համար, այդ թվում՝ նոր, վերարտադրված, կենսատեխնոլոգիական ծագման, արյունից կամ պլազմայից ստացված, իմունաբանական (պատվաստանյութեր, շիճուկներ, ալերգածիններ), ռադիոակտիվ, բազմաբաղադրատարր հոմեոպաթային, անասնաբուժական	բազային տուրքի 60-ապատիկի չափով
բ)	դեղերի յուրաքանչյուր դեղաչափի և (կամ) դեղաձևի համար	բազային տուրքի 40-ապատիկի չափով
գ)	գրանցված դեղերի նոր ցուցում(ներ)ի համար	բազային տուրքի 40-ապատիկի չափով
դ)	գրանցված դեղերի նոր համակցությունների համար	բազային տուրքի 60-ապատիկի չափով
ե)	ավանդական և բուսական դեղերի համար (այդ թվում՝ փաթեթավորված և պիտակավորված դեղաբուսական հումք, բուժիչ թեյեր)	բազային տուրքի 10-ապատիկի չափով
զ)	միաբաղադրատարր հոմեոպաթային դեղերի առաջին դեղաձևի, դեղաչափի, յուրաքանչյուր հաջորդ դեղաձևի, դեղաչափի, նոր ցուցում(ներ)ի համար	բազային տուրքի 5-ապատիկի չափով
է)	հիվանդությունների հարուցիչների, ինչպես նաև դրանց փոխանցող միջատներին, մակաբույծներին ոչնչացնող հակասեպտիկները և հակապարազիտային դեղերը, որոնք նախատեսված են մաշկի, լորձաթաղանթի, մազերի, եղունգների համար	բազային տուրքի 20-ապատիկի չափով
ը)	պետական գրանցման հավաստագրի վերաձևակերպման համար	բազային տուրքի 5-ապատիկի չափով
թ)	վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման համար	բազային տուրքի 60-ապատիկի չափով

35.1.	սանիտարահամաճարակային հսկողության ենթակա ապրանքների պետական գրանցման համար	բազային տուրքի տասնապատիկի չափով
36.	գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար՝	
1.	անշարժ գույքի միավորի կամ անշարժ գույքի միավորի մաս կազմող անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար, բացառությամբ օտարման կամ դատական ակտի հիման վրա սեփականության իրավունքի պետական գրանցման	բազային տուրքի չափով
2.	անշարժ գույքի միավորի կամ դրա մասի կամ անշարժ գույքի միավորի նկատմամբ բաժնեմասի (բաժնեմասերի) օտարման (առք ու վաճառքի, նվիրատվության, փոխանակման, փոխանցման) հիման վրա իրավունքի պետական գրանցում կատարելու համար, բացառությամբ պետական կամ համայնքային սեփականություն համարվող չկառուցապատված հողամասերի.	
	ա) չկառուցապատված հողամասերի, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի կամ մինչև 200 քառակուսի մետր ներքին մակերեսով հասարակական կամ արտադրական նշանակության շինությունների	բազային տուրքի քսանապատիկի չափով
	բ) 200 քառակուսի մետրից ավելի ներքին մակերեսով հասարակական կամ արտադրական նշանակության շինությունների	բազային տուրքի քառասնապատիկի չափով

	գ) գյուղատնտեսական նշանակության հողամասերի	բազային տուրքի չափով
	դ) այլ անշարժ գույքի	բազային տուրքի քսանապատիկի չափով
3.	պետական կամ համայնքային սեփականություն համարվող չկառուցապատված հողամասերի օտարման (առք ու վաճառքի, նվիրատվության, փոխանակման) հիման վրա իրավունքի պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի չափով
4.	անշարժ գույքի նկատմամբ իրավունքների, բացառությամբ սեփականության իրավունքի, պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի չափով
5.	անշարժ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման պետական գրանցման համար, բացառությամբ օրենքի ուժով կիրառվող սահմանափակման դեպքերի	բազային տուրքի չափով
6.	դատական ակտի հիման վրա անշարժ գույքի նկատմամբ իրավունքի ծագման, փոփոխման, փոխանցման կամ դադարման պետական գրանցման համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
7.	անշարժ գույքի սեփականատիրոջ փոփոխման հիման վրա, եթե սեփականատիրոջ փոփոխությունը պայմանավորված է իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում որպես ավանդ անշարժ գույքի հանձնմամբ (ներդրմամբ, փոխանցմամբ) կամ իրավաբանական անձի վերակազմակերպմամբ	բազային տուրքի չափով

	(միաձուլմամբ, միացմամբ, բաժանմամբ, առանձնացմամբ, վերակազմավորմամբ) կամ իրավաբանական անձի լուծարմամբ կամ իրավաբանական անձի բաժնետոմսի (բաժնեմասի, փայի) դիմաց անշարժ գույքը բաժնետոմսի (բաժնեմասի, փայի) սեփականատիրոջը փոխանցմամբ	
8.	շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքի, այդ թվում՝ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքի գրավի գրանցում կատարելու համար	բազային տուրքի կրկնապատիկի չափով
Անշարժ գույքի միավորի նկատմամբ միաժամանակ տարբեր հիմքով, ինչպես նաև անշարժ գույքի միավորի նկատմամբ միաժամանակ մեկից ավելի իրավունքների պետական գրանցման դեպքում կիրառվում է դրանց համար սահմանված պետական տուրքի դրույքաչափերից առավելագույնը, իսկ պետական տուրքի դրույքաչափերը հավասար լինելու դեպքում՝ մեկ պետական տուրք:		
37.	չափման միջոցների տեսակի հաստատման, ստանդարտ նմուշների հաստատման պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով
38.	անշարժ հուշարձանների հետախուզության և հնագիտական պեղումների թույլտվության և պետական գրանցման համար՝	
ա)	ֆիզիկական անձանցից	բազային տուրքի կրկնապատիկի չափով
բ)	իրավաբանական անձանցից և իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից	բազային տուրքի քառապատիկի չափով
39	***(կետն ուժը կորցրել է 11.10.07 ՀՕ-205-Ն)***	

.		
40.	Մտավոր սեփականության օբյեկտի գրանցման և այդ ապրանքների ցանկացած մաքսային ռեժիմով բացթողումը կասեցնելու մասին դիմումը վերադաս մաքսային մարմնի կողմից ընդունելու համար[ուղղ.]	բազային տուրքի 20-ապատիկի չափով
41.	Համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար՝	բազային տուրքի 120-ապատիկի չափով

Սույն հոդվածի 35-րդ և 36-րդ կետերով սահմանված պետական տուրքի դրույքաչափերը չեն ներառում ծառայությունների կամ գործողությունների կատարման հետ կապված ծախսերը:

Հոդված 20.1. Օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական տուրքի դրույքաչափերը

1. Ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) հրագործական ապրանքների արտադրության, ներմուծման կամ առևտրի իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝	
ֆիզիկական անձանցից	տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով
իրավաբանական անձանցից	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով

2) անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների և ախտորոշիչ միջոցների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով
3) անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝	
ֆիզիկական անձանցից	տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով
իրավաբանական անձանցից	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով
4) բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների արտադրության և (կամ) վաճառքի իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝	
ֆիզիկական անձանցից	տարեկան բազային տուրքի 10-ապատիկի չափով
իրավաբանական անձանցից	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով
5) թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220820 ծածկագրին դասվող խաղողի գինու կամ խաղողի մզման թորումից ստացվող սպիրտային թրմօղիների արտադրության և իրացման, 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին	տարեկան բազային տուրքի 15000-ապատիկի չափով

դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների, 2208 ծածկագրին դասվող՝ միայն մեղրից, պտուղներից և հատապտուղներից թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրության) և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	
5.1) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220820 ծածկագրին դասվող խաղողի գինու կամ խաղողի մզման թորումից ստացվող սպիրտային թրմօղիների արտադրության իրականացման և մինչև 100 հազար լիտր (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) արտադրանքի իրացման իրավունք ձեռք բերելու համար: Արտադրողի կողմից 100 հազար լիտրից ավելի իրացված արտադրանքի (բացառությամբ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 220820890 ծածկագրին դասվող արտադրանքի) յուրաքանչյուր լիտրի (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) համար լրացուցիչ: Արտադրողի կողմից 100 հազար լիտրից ավելի իրացված ԱՏԳ ԱԱ դասակարգչի 220820890 ծածկագրին դասվող արտադրանքի յուրաքանչյուր լիտրի (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) համար լրացուցիչ:	տարեկան բազային տուրքի 10000-ապատիկի չափով 25 դրամ 100 դրամ
5.2) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220820 ծածկագրին դասվող խաղողի գինու կամ խաղողի մզման թորումից	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով

ստացվող սպիրտային թրմօղիների արտադրություն՝ առանց իրացման իրավունքի	
6) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով
7) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող՝ միայն մեղրից, պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ՝ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով
7.1) խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով
8) գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների և մեղրից ստացված այլ ալկոհոլային խմիչքների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 25-ապատիկի չափով
9) գարեջրի արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 500-ապատիկի չափով
10) առևտրի իրականացման վայրի կազմակերպման իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝	
ա. Երևան քաղաքում	տարեկան բազային

	տուրքի 1000-ապատիկի չափով
բ. մարզկենտրոններում	տարեկան բազային տուրքի 500-ապատիկի չափով
գ. Երևան քաղաքից և մարզկենտրոններից դուրս	տարեկան բազային տուրքի 300-ապատիկի չափով
11) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օղու ներմուծում իրականացնելու իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 15000-ապատիկի չափով
11.1) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220820 ծածկագրին դասվող խաղողի գինու կամ խաղողի մզման թորումից ստացվող սպիրտային թրմօղիների մինչև 100 հազար լիտր (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) ԵԱՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծման, այդ թվում՝ վերամշակման նպատակով ներմուծման իրավունք ձեռք բերելու համար: Ներմուծողի կողմից 100 հազար լիտրից ավելի ներմուծված արտադրանքի (բացառությամբ՝ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 220820890 ծածկագրին դասվող արտադրանքի) յուրաքանչյուր լիտրի (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով)	տարեկան բազային տուրքի 10000-ապատիկի չափով 25 դրամ 100 դրամ

համար լրացուցիչ: Ներմուծողի կողմից 100 հազար լիտրից ավելի ԵԱՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծված, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծված, այդ թվում՝ վերամշակման նպատակով ներմուծված ԱՏԳ ԱԱ դասակարգչի 220820890 ծածկագրին դասվող արտադրանքի յուրաքանչյուր լիտրի 100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) համար լրացուցիչ:	
12) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով
13) գենետիկ ինժեներիայի գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 50- ապատիկի չափով:
13) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող՝ բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրակցված ալմաստների առք ու վաճառքի, ներմուծման, արտահանման, փոխադրման համար՝	տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով
14) ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով
15)- ***(ենթակետն ուժը կորցրել է 03.06.19 ՀՕ-59-Ն)***	

16) Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի հավատարմագրային կառավարման իրավունք ձեռք բերելու համար	տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով

2. Բացառությամբ սույն օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին կետի 5.1-ին, 5.2-րդ և 10-րդ ենթակետերում նշված ծանուցման ենթակա գործունեության տեսակների, մեկից ավելի յուրաքանչյուր վայրում ևս ծանուցման ենթակա նույն տեսակի գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար տարեկան տվյալ գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝ սահմանված պետական տուրքի դրույքաչափի հիսուն տոկոսի չափով:

2.1. Եթե իրավաբանական կամ ֆիզիկական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը միաժամանակ իրականացնում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «4. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ» բաժնի 1-ին և 1.1-ին կամ 8-րդ և 8.1-ին կետերում նշված գործունեության տեսակները, ապա այդ գործունեության տեսակների իրականացման իրավունք ձեռք բերելու համար վճարում են սույն հոդվածի 1-ին կետի 5-րդ կամ 11-րդ ենթակետով սահմանված բազային տուրքի 15000-ապատիկի չափով տարեկան պետական տուրք, ընդ որում այն դեպքում, երբ իրավաբանական կամ ֆիզիկական անձը կամ անհատ ձեռնարկատերն ստացել է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «4. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ» բաժնի՝

ա. 1-ին կամ 8-րդ կետում նշված գործունեության տեսակների իրականացման իրավունք և լրացուցիչ ծանուցում է ներկայացրել միաժամանակ 1.1-ին կամ 8.1-ին կետի գործունեության տեսակներով զբաղվելու համար, ապա 1.1-ին կամ 8.1-ին կետի գործունեության տեսակներով զբաղվելու իրավունքը գործում է մինչև 1-ին կամ 8-րդ կետի գործունեության տեսակով զբաղվելու համար պետական տուրքի վճարման հաջորդ ժամկետի սկիզբը,

բ. 1.1-ին կամ 8.1-ին կետում նշված գործունեության տեսակների իրականացման իրավունք և լրացուցիչ ծանուցում է ներկայացրել միաժամանակ 1-ին կամ 8-րդ կետի գործունեության տեսակներով զբաղվելու համար, ապա վճարում է լրացուցիչ պետական տուրք՝ տարեկան բազային տուրքի 5000-ապատիկի չափով, իսկ 1-ին կամ 8-րդ կետի գործունեության տեսակներով զբաղվելու իրավունքը գործում է մինչև 1.1-ին կամ 8.1-ին կետի գործունեության տեսակով զբաղվելու համար պետական տուրքի վճարման հաջորդ ժամկետի սկիզբը:

3. Ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման էլեկտրոնային գրանցամատյանից այլ անձանց յուրաքանչյուր տեղեկատվության թղթային տարբերակով տրամադրման համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով:

4. Եթե «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ծանուցում ներկայացրած անձը պարտավոր է ծանուցման ենթակա գործունեությունն իրականացնել միայն ծանուցման մեջ նշված վայրում, ապա մեկից ավելի վայրերում ծանուցման ենթակա նույն գործունեության իրականացման վերաբերյալ միաժամանակ ծանուցումներ ներկայացնելու դեպքում ծանուցումներ ներկայացրած անձը կարող է ինքնուրույն ընտրել այն ծանուցումը, որում նշված վայրում գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար սույն օրենքով սահմանված տարեկան պետական տուրքերը ենթակա են գանձման (վճարման) սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված դրույքաչափերով: Ծանուցում ներկայացրած անձի կողմից ինքնուրույն չորոշելու և (կամ) «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազոր մարմնին չհայտնելու դեպքում լիազոր մարմինն իր հայեցողությամբ որոշում է, թե վայրերից որում նույն գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար է սույն օրենքով սահմանված տարեկան պետական տուրքը ենթակա գանձման (վճարման) սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված դրույքաչափերով:

5. Եթե ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձը ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք է ձեռք բերել՝ վճարելով տարեկան

պետական տուրքը սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, ապա ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար սույն օրենքի այլ կետերով սահմանված կարգով վճարված պետական տուրքի հիման վրա ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի դադարեցման կամ սահմանված տարեկան հերթական պետական տուրքը սահմանված ժամկետում չվճարելու հիմքով կասեցված համարվելու օրվանից սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն վճարած տուրքը եռօրյա ժամկետում ենթակա է լրավճարման այդ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու որևէ մեկի համար՝ սույն օրենքի այլ կետերով տվյալ գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար սահմանված պետական տուրքի դրույքաչափի 50 տոկոսի չափով: Եռօրյա ժամկետում լրավճարումը չկատարելու դեպքում սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն վճարված տարեկան պետական տուրքի հիման վրա ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքը (իրավունքները) համարվում է (են) կասեցված եռօրյա ժամկետին հաջորդող օրվանից: